Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 14 — ՈՒՐԲԱԹ 20 ՅՈՒՆՈՒՍԻ 1884 (Ն. Տ.) 1 ՓԵՏՐՈՒԱՐ — 4 ՐԷՊԻՒԼ, ԱԽԸՐ 1301

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

40 ՓԱՐԱ — 40 ՓԱՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ԳԱՅՄԱՆԸ

Ծանուցման տողը մի կ անգամի համար 3 դուրուշ. իսկ ու անգամի համար 2 դուրուշ է. աւելի անգամեր ու համար զատ սակարկութիւն կըլլայ:

Օրագրոյս վերաբերեալ Նամակ կամ որ եւ իցէ գրութիւն պէտք է ուղղել՝

«Ա. խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»

ԹՄԲԱԳՐԱՏՈՒՆ Ղալաթիա, Իսմիրլի օղլու խան, թ. 19.

Իսկ գաւառներէն հետեւեալ հասցէին՝

درسعادت ۱۹ نمره ازمیر اوغلی خانی غلطه ده

آسیه اداره سی عزتلو (ولاده)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրասոյ համար	Տարեկան դահեկան	արժէք	200
« «	Վեցամսեայ	« «	100
« «	Եռամսեայ	« «	30
« «	Ամսական	« «	[illegible]
« «	Հատուած	« «	1
Դուռանայ համար	Տարեկան	« «	240
« «	Վեցամսեայ	« «	120
« «	Եռամսեայ	« «	60
Օտար երկիրներ	Տարեկան	ֆրանք	56
« «	Վեցամսեայ	«	28

Դուրս դրկուած լրագրաց համբուռ ծախքը խմբագրութեան վրայ է:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

(Երեկի Ռշ.թ.թերով Եկած Լրաբերերեն թարգմած.)

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՍՈՒԱՆ

Գահիրէէն Ռիւզէրի գործակալութեան կը հեռագրեն յուն. 25 Թուով.

«Կորտոն փաշա և գնդապետ Սղիւարդ վաղն երեկոյ ճամբայ կ'ելնեն Խարդում երթալու համար, Նեղոսի ճամբով, Քօրսքոյէն անցնելով: Կորտոն զօրավարի պաշտօնին նպատակն է կատարելապէս պարպել զՍուան, ի միասին պարպելով և զԽարդում: Այս առաւօտ Խեդիվին հետ տեսակցած միջոցին, Կորտոն փաշա ցաւ յայտնեց այն անարգական դիտողութեանց համար որք Լոնտոնի լրագրոյ մը մէջ երևցած էին ընդդէմ Խեդիվին: Խրտիվը զԿորտոն փաշա Սուանի կուսակալ կարգեց, լիազօր իշխանութիւններ տալով նմա, միանգամայն զօրեղապէս յանձնարարելով որ պէտք եղած միջոցները ձեռք առնու վասն ապահովութեան քաղաքացւոց և եւրոպացի բնակչաց ի Սուան, որ պէտք է իւր առաջին գործը լինի:

«Խեդիվն այսօր կանչեց Տարֆուրի նախկին Սուլթանին որդի Էմիր Ապա-էլ-Շաղուրն, եւ ըսաւ թէ այդ նահանգն իրեն կը թողու ինչ ինչ պայմաններով, որք Խեդիվական հրամանագրոյ մը մէջ պիտի հրատարակուին, եւ յորոց մին պիտի լինի ազատութիւն վաճառականութեան և ընդհանուր գերեվաճառի: Խեդիվն Էմիրէն տուրք չը պիտի պահանջէ: Շտապուր հասկցուց թէ, ըստ ամենայն հաւանականութեան, այս պայմաններով պիտի ընդունի իրեն եղած առաջարկը:

«Զորս օրէ ի վեր Խարդումի հետ հեռագրական հաղորդակցութիւնը ընդհատուած են՝ կը կարծուի թէ օդին դէջութեան պատճառաւ:

Թայմս լրագրոյն Գահիրէի թղթակիցը կը հեռագրէ յուն. 25 Թուով.

«Կորտոն զօրավարին թղթակիցներ ընդունելու և իւր տեսութիւններն անոնց հաղորդելու մասին դժկամակութիւնն այնչափ հանրածանօթ էր, որ փորձ չիտրձեցի իւր կարծիքն իմանալու օրուան ինդրոյն վրայ, զի գուցէ նոյն պատասխանը պիտի ստանայի, ինչ որ անդդոյշ պաշտօնատար մը ստացաւ լիմանիա, յոյս յայտնելով թէ զօրավարը Խարդումի պարպուիլը պիտի արգիլէ: Զօրավարը պատասխանեց. «Հաւանականապէս իմ հրահանգաց միայն պիտի հնազանդիմ:»

«Բայց անգազանապահութիւն բերած չեմ լինիր յայտնելով թէ ի պատասխան այն հարցման թէ ինչ (զօրավարը) Սուանը պահպանելու կողմը չէ՞ միթէ, զօրավարն ըսաւ թէ նախապէս սա երկու հարցմանց պատասխանները պէտք է տրուին իրեն. — «Անգլիական կառավարութիւնը Սուանի վերադրաւման ծախքը պիտի վճարէ՞ արդեօք, և Սուանի կառավարութիւնը պիտի ըստանձնէ՞:» Եթէ այս երկու հարցմանց ալ հաստատական պատասխան տրուի, յայնժամ ինք Սուանի պահպանման կողմը պիտի գտնուի:

Թայմս լրագրոյն Գահիրէի թղթակիցն օգտակար կը համարի որ հնար եղածին չափ ընդարձակապէս ծանուցուի Սուանի ամեն կողմը Կորտոն փաշայի պաշտօնն: «Այս լուր, և քիչ մը անգլիական զորաց դէպ ի հարաւակողմ շարժումն, որոց թիւը չափազանցել տալու է ընթացիկ զրոյցներով, մեծ արգիւնք կրնան արտադրել՝ վերանում պատճառելով Մէհտիին՝ Խարդումի վրայ յարձակելու մասին:»

Տարօրինակ արգիւնք մը պէտք է լինի դիպուած, որ սուտ լուրեր տարածելով միայն կրնայ ձեռք բերուիլ: Եւ խորհիլ թէ Անգլիացիք այս տեսակ միջոցներ կը մտարերեն՝ թերևս ազատելու համար զԽարդում:

ՌՈՒՍԻԱ

Հեռագիրն անցեալ օր ծանոյց մեզ թէ Ոչնչականք Խարքովի մէջ նոր շահատակութիւն մը գործեր են, սպանելով ոստիկանութեան սպայ մը: Պերլինէն յուն. 23 Թուով քաշուած հեռագրէ մը կը տեղեկանանք թէ Խարքովի մէջ, այս ոճրի գործուելէն մի քանի օր առաջ, Ընկերվարականաց կամ Ոչնչականաց ամբողջ խումբ մը գտնուեր է, որոյ անդամներէն շատեր ձերբակալուեր են, և կարեւոր թուղթեր երեւան եկեր են: Որովհետեւ յիշեալ սպայն գլխաւոր դերը կատարած էր այս մասին, Ոչնչականք ուզեր են վրէժ լուծել նմանէ:

Կառավարութիւնը Բ. դրսպուրգի Բէշկական Համալսարանին բոլոր ի-գական ուսանողները պարտաւորեց յետ այսորիկ ի միասին բնակելու Ռուսիա: Դարձին ամենէն հեռաքերքրաշարժ կողմը սա է թէ Նովեի Վրեմիայի լաւագոյն խմբագրերն Հրեաներ են, որք յաճախ կը գրեն ամենէն կատաղի յօդուածներն ընդդէմ Հրէից (՝.՞.):

Այսպիսի տարօրինակ թերթ մը Հայոց դէմ այնպիսի տարօրինակ զրպարտութիւններ լսել զարմանալի չէր ամենեւին:

Այն զրոյց թէ զօրավար Լոռիս Մելիքոֆ նորէն գործոց գլուխը պիտի անցնի Ռուսիոյ մէջ, հաստատութիւն կը գտնէ:

Զարին և Կայսերական ընտանեաց Բէգրսպուրգ հանդիպելն ի վեր, մայրաքաղաքը բոլորովին նոր կերպարանքի մը ներքև է: Պալատական հեռակներու և կառքերու արագարագ երթևեկը, և վաճառատունց թատրոններու մէջ խառնաբազմութիւնք ցոյց կուտան թէ Բէգրսպուրգ քիչ մը աւելի զուարթ կեանք մը սկսած է վայելել վերջին տարիներս: Բէգրսպուրգի բնակչաց վրայ տիրող տխրութիւնը սկսած է փարատիլ: Ոչ միայն ժողովուրդն և առևտրականները առաջուընէ շատ աւելի գոհ կ'երեւին, այլ նաև յոյս կայ թէ այս բիչ շատ կազդուրիչ փիճակ պիտի շարունակուի:

Այս մասին կը կարծուի թէ կայսրը որոշած է Բէգրսպուրգ մնալ մինչև Մեծ պահք, որպէս զի ասով հերքած լինի այն անհաճոյ տարաձայնութիւնները, որք տեղի ունեցան Սուանի գնդապետին սպանման առթիւ, և որք ցոյց կուտային Ռուսիոյ մայրաքաղաքը՝ Ոչնչականաց նորանոր գործադրութեանց սպառնալեաց ներքև:

Իսկ միւս կողմէն Գրէնէրալ Բ. ԼէՖնէի մէջ կ'ուրդանք.

«Զկարծուիր որ կայսրն և կայսրուհին երկար ժամանակ ի Բէգրսպուրգ մնան: Թէեւ Նշան մը չերեւիր որ Ոչնչականք կայսերական ընտանեաց դէմ նորանոր գործադրութիւններ պատրաստելու վրայ լինին, բայց և այնպէս ոստիկանութիւնը հարկադրուած է իւր բոլոր աշխատութիւնը մայրաքաղաքին վրայ կեդրոնացնել, որով Ոչնչականաց դէմ այնքան զսպողական զօրաւոր միջոցներ կարելի չէ ի գործ դնել:

«Այս պատճառաւ հաւանական է որ կայսերական ընտանիքն քիչ օր մնայ մայրաքաղաքին մէջ, ինչպէս որոշած էր արդէն:»

ՖՐԱՆՍԱ

Ֆրանսական զօրքերը Թոնքինի կողմը կարեւոր շարժում մը չեն ըրած այս վերջին օրերս: Պաքնինի բերդաքաղաքին վրայ յարձակումն յետաձգուած է մինչեւ փետր. 15: Այդ դիրք լաւ պաշտպանուած լինել կը թուի Սեւ Դրօշակաց և Զինացւոց կողմէ, և սպառազինութիւնք կատարեալ են եղեր: Ուստի Ֆրանսացի հրամանատարը կ'ուզէ իւր պատրաստութիւններն ամբողջացնելէն յետոյ միայն փորձել այս վճռական գործողութիւնը:

Հանկ-Քոնկէն (Զինաստան) կը հեռագրեն յուն. 25 Թուով.

«Ծանր լուրեր կուգան Հայնան կղզիէն: Զինացի զօրաց գալուստն, որք կղզին պիտի պաշտպանեն Ֆրանսական գրաւման մը դէմ, մեծ գրգռութիւն պատճառեց ժողովրդին մէջ: Օտարազգիք երկիրի մէջ են յոյժ: Կղզւոյն Նաւահանգիստն, ի Հայ-Հու բնակող օտարազգիք ամեն ամեն օր կ'անարգուին ոմխիսին կողմէ: Ամենուրեք յայտարարութիւններ կը փակցուին՝ ժողովուրդն հրաւիրող որ «օտար սատանայները» ջարդէ: Երեք օտարազգիք քարկոծուեցան:»

Հանկ-Քոնկէն կը հեռագրեն յուն. 24 Թուով, թէ Ֆրանսացիք հետազօտիչ ատուարաթի զօրախումբ մը դրկած են դէպ ի Պաքնինի, որ մեծ թուով զօրութեամբ թշնամին, տեսած է կամ միր և Սեւ դեռերու միացման տեղը: Թշնամ.ք կրա՝ ըրին հետազօտիչ զօրախմբին վրայ, բայց առանց վնաս պատճառելու: Կը կարծուի թէ Ֆրանսացիք մեծ ընդդիմութեան պիտի հանդիպին երբ Պաքնինի վրայ քալեն:

Քանդոնէն կը հեռագրեն թէ մեծ անհանգստութիւն կը տիրէ Ֆու-Զէուի մէջ:

«Քաղաքին պատերուն վրայ խռովայոյզ ազդարարութիւններ փակցուեցան, որք տեղացի ժողովուրդը կը դրդռեն օտարականաց, մանաւանդ Ֆրանսացւոց դէմ:

«Օտարական մը ամբոխին կողմանէ յարձակումի կրելով, Անգլիական հիւպատոսարանն ապաստանեցաւ:

«Զինական իշխանութիւնք հարկ եղած միջոցները ձեռք առին այս օրինակ խանդաչափութեանց առաջքն առնելու համար:»

Բարիզի Երեսփոխանաց ժողովոյ ծայրայեղ ձախակողմեան կուսակցութեան անդամներն իրենց հիմնագիրն որոշեցին, յորում կը պահանջեն Սահմանադրութեան վերաքննութիւնը (Ներակայիսի ընդդիմ կ'ենթադրէ,) Հռոմայ Պապին հետ նաբոլէոն Առաջնոյ կնքած կրօնական պայմանագրութեան (Բռէվէոպա) ջնջում, և ժողովրդական ընտրութիւն դատաւորաց, (փոխանակ կառավարութենէն անուանելու:)

Թունուզէն կը հեռագրեն յուն. 24 Թուով թէ տեղւոյն գերմանացի հիւպատոսը նոյն օրն իմացուցած է ֆրանսական գործակատար Պարոն Տ'Էսդուրնէլի թէ Գերմանիա կը հաւանի Թունուզի Պէյութեան մէջ Գերմանական հիւպատոսական իրաւութեան ջնջման, փետր.ի մէկէն սկսեալ: Ստոյգ կը համարուի թէ տակաւին այս փոփոխման չհաւանող տերութիւնք պիտի հետեւին Գերմանիոյ օրինակին, և այսպէս ֆրանսական վարչութիւնն ու դիւանագիտութիւնք կարեւոր՝ յաջողութիւն մը ձեռք բերած պիտի լինին:

Լիոնի «Աշխարհագրական ընկերութեան» հաստատութեան տասներորդ տարեդարձը տօնելու համար յունուար 24ին գումարում մը տեղի ունեցաւ Լիոնի Պէյրուռ թատրոնին մէջ, և Պ. տը Լէսէփս՝ որ այս գումարման կը նախագահեր, բանախօսութիւն մ'ըրաւ իւր կատարած գլխաւոր աշխատութեանց վրայ: Պատմեց Սուէյշի ջրանցքին զանազան անցքերը, և յիշատակելով այն դժուարութիւններ որք ծագած են Ֆրանսական և Անգլիական կառավարութեանց միջև, յայտարարեց թէ կնքուած պայմանագիր մը չի կրնար խզուիլ և թէ Սուէյշի ջրանցքն՝ որ ֆրանսական գործ մ'է, չի կրնար կորզուիլ Ֆրանսացւոց ձեռքէն:

«Սուէյշի ջրանցքին ընկերութեան բաժնետերաց կրնամ հաստատել թէ ամենեքեան միասին ամենեքեան աւելի բարձրաձայն կը ծիծաղէին:

Միայն Տելեմաքին քով նստող օրիորդը չէր ծիծաղեր, մինչև իսկ կ'երեւէր թէ իւր վիճակին վրայ կը ցաւէր: Երիտասարդը նշմարեց զայս, բայց կարծեց թէ կոճապղպեղն էր որ անոր ստամոքսը կը նեղէր: Դժբաղդութիւնն անիրաւ կրնէ զմարդ:

Սակայն և այնպէս քաղաքավարութեամբ մեծ գաւաթ մը պաղ ջուր լցուց, զոր օրիորդը կը խնդրէր իրմէ, վասնզի ծանրագլուխ երեւելու մեծ պէտք մը կ'զգար: Օրիորդն այս առիթէն օգուտ քաղեց անոր ակռան ի վար բռնելու, «Մխիթարուեցէք Պ. Տրբ.ի, բոլոր կանայք Սոֆի Միզբլի չեն նմանիր:

Տելեմաք վերականգնեցաւ, իբր թէ օձէ մը խայթած լինէր: Դեռատի օրիորդը ժպտելով անոր կը նայէր, և իւր առջեւի ակռայներն, որք շատ երկայն էին, ամբողջապէս կը տեսնուէին: Կամ բառերը, շարժուածները, հայեցուածքներն և ձայնին հնչումներն իմաստ մը չունին, կամ ամենէ քաղցր խոստովանութեանց նախաշաւիղն են: Տելեմաք պէտք էր որ օգուտ քաղէր իւր առաւելութիւններէն: Բայց արգարացնելու համար զայն պէտք է կրկնել թէ դժբաղդութիւնը կը զայրացնէր զինքն:

Շարունակելի

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

9

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲԱՐՔԵՐ

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԱՌԱԳԱՍՏ. — ԱՐԿԱԾ ՏԵԼԵՄԱՔԱՅ.

Որովհետեւ գեղեցիկ օդով և արեւմտեան սիրուն հովով մը մեկնած էին ցամաքէն, Բալիֆորնիա շրջելու մինչեւ ցարդ իւր տեսերուն խոստումները բռնելով՝ հաղիւ ուրբ.ը կը տատանէր և ուղեւորաց ախորժակն ալ բաց էր: Ուղեւորաց շատերը սա հանրածանօթ դաղափարն ունէին թէ ծովահարութեան դէմ նախազգուշական լաւագոյն դեղն է հնար եղածին չափ շատ ուտել: Տելեմաք, որ իւր կարծածէն աւելի շուտ հանդարտած էր իւր առաջին բարկութենէն, գլուխն իւր սկաւառակէն վեր առաւ և սկսաւ վերստին աչքէ անցուցնել իւր քով նստողները:

Իւր ալ կողմէ նստած էր խարտեաշ և մինչեւ իսկ շիկագոյն դէմքի օրիորդ մը, նրբակազմ և բարձրահասակ, որ իւր ամբողջութեամբ տերեւազուրկ բարտիի մ'երեւոյթը կը յիշեցնէր, և կոճապղպեղի (զինճէֆիլ) համեմունք ուտելու մասին նշանաւոր կը հանդիսանար: Երկու հոգի անդին, համատիպ բայց գուցէ քիչ մ'աւելի տարեւոր օրիորդ մը, չափազանցօրէն վարունգ կ'սպառէր: Այս երկու օրիորդաց հայրն, որ բնականաբար երկուքին մէջտեղը նստած էր, իւր կարճ հասակու և իւր դէմ փորով հակապատկերն էր իւր աղջկանց: Բայց այս ազնուականը ուզելով դիտողութիւն մ'ընել իւր կրտսեր աղջկան, որ ստուգիւ ստամոքսային նեղութիւններ կը պատրաստէր իրեն՝ ուզեւորութեան բոլոր տեւողութեան համար, պատասխան ստացաւ թէ ինք իւր յատուկ գործերուն կրնար խառնուիլ և ուրիշին գործին չէր կրնար միջամտել: Այս հրաւէրին վրայ, հայրն, անձայն և գլուխը խոնարհած, մէկէն իւր երկու աղջկանց մէջտեղէն երևցաւ, անհետ եղաւ: Այս միջադէպէն յետոյ, կրտսեր աղջիկն, սիրուն ժպտով մը, իւր գաւաթը Տելեմաքին երկնցուց, պաղ ջուր լցուցնելու համար:

Դիմացը, սեղանին միւս կողմը կղերականը նստած էր, որ քառասուն տարեկան կրսրվի, խարտեաշ մազերով, բայց գոյնով պատուարժան մարդ մ'էր, և շիշ մը գինի կը բաժներ իւր լծակցին հետ, որ իրը երեսուն տարեկան թխադէմ և սիրուն կին մ'էր: Ասոնք գիտողութեան արժանի բան մը չունէին, և Տելեմաք իւր ձախ կողմը գտնուողներուն վրայ դիտողութիւններ ընելու պիտի սկսէր, երբ սպասաւոր տղայ մը, որ սեղանները բոլորտիքը կը դառնար, անոր մօտենալով իւր խուցին թիւն հարցուց:

Տելեմաք իւր վերարկուին ներքին գրպանը խուզարկելէ յետոյ, թղթապանակ մը հանեց և անոր մէջէն ալ՝ այն ընկալագիրը, զոր Պրոուէյի գրասենեկին գործակալն յանձնած էր իրեն: Օպասաւորն ապշած երեւցաւ:

— Պարոն հարսանեկան առագաստը վարձողներուն հե՞տ կը գրաւուի:

— Ես վարձած եմ զայն, ըսաւ Տելեմաք, ցաւելով իւր 1,500 տողաբին յիշատակին վրայ, թո՛ղ իրեն պատահած ձախողութիւնը: Ցեռոյ:

— Ցեռոյ, կրկնեց սպասաւորը խոնարհարար ողջունելով զայն. Պարոնին հրամանաց ներքեւ կը գրաւուիմ:

Տելեմաք ուսերը թօթուեց և նորէն սկսաւ ուտել, քիչիմ իւր սկաւառակին մէջ կախած: Բայց ոչ ևս նօթի էր: Կը տեսնէր թէ ամենուն աչքերն իւր վրայ սեւեռած էին: Երեք սեղաններու շրջիկ փսփսաքին մէջ «Հարսանեկան առագաստ» խօսքը կը լսէր, որ սրահին շուրջը կը դառնար և քիչ ետքը շրջանին շուրջը: Հոս հոն հեղձուցիկ ծիծաղներ կը լսուէին մէկէն: Իւր ի դերև եղած ամուսնութեան ականատեսներն մին, որ ուղեւորաց մէջ ծանօթներ ունէր, Տելեմաքի արկածն անոնց պատմելու ժամանակ ունեցած էր շրջենաւին մեկնելէն առաջ: Պատմութիւնը բոլոր շրջենաւին մէջ բերնէ բերան կը շրջէր, զանազան մեկնութեանց առիթ տալով: Կանայք Տելեմաքին վրայ կը ցաւէին:

— Իմ կարծեօքս, օրիորդը շատ լաւ ըրած է, ըսաւ ձայն մը, որ մեր դիւցազին ձախակողմէն կուգար: Տղայ ծեծող մարդ մը ամեն բանի արժանի է:

Տելեմաք դլուխը քիչ մը դարձուցնելով նշմարեց քիչ մ'առաջ իւր ստացած թշնամին, Գերմանական շեշտով խօսող կինն, որ երեք սկաւառակ հեւուն էր:

Կինը տեսաւ այս շարժումն և իւր խօսքը շարունակելով,

— Զեմ ուզեր չարախօսել դրացւոյս վրայ, զի հակառակ է Աւետարանին, բայց կանխաւ կը ցաւիմ այն դժբաղդ արարածին վրայ, որ Տիկին Թբ.ի (Հնդկահաւ) պիտի կռուի:

Թերեւս Տբ.ի ըսել ուզած էր, բայց իւր հնչումը մոռնած էր զինքն. բոլոր սեղանակից.ք ծիծաղեցան: Տելեմաք բողոքեց:

— Ներեցէք դիտել տալ ձեզ, Տիկին, թէ անունս Թբ.ի չէ, այլ Տբ.ի. սակայն կը հարցնեմ թէ ի՞նչ իրաւամբ . . . :

Դէր կինն, որ բոլոր խօսակցութեանց ձայնը խեղդելու կերպով մը խօսելով հանդերձ, միայն իւր քովինին հետ խօսիլ ձեւացուցած էր, կամաց կամաց Տելեմաքին դարձաւ: Ինք առանձին կը ճաշէր առաջնակարգ ուղեւորաց սեղանին վրայ. տղան ու իրենց վարժուհին ալ զատ կը ճաշէին:

Վերջապէս իւր թշնամին նշմարելով, արհամարհոտ աչքով մ'անոր նայեցաւ: Սակայն բոլոր խօսակցութիւնք գադրած էին: Ամեն ոք դէր կնոջ բերանէն երթալիք խօսքին կ'սպասէր: Ցայնժամ շատ զարմացած երեւցաւ թէ այս պարոնն, զոր չէր ճանչեր և որոյ հետ չէր խօսեր, ի՞նչպէս համարձակած էր իրեն հետ խօսիլ:

— Պարոն Տբ.ի (էշ), ըսաւ, այսպիսի տարօրինակ և դժուար անուն մը արտասանելու մեծ ջանք մ'ընել ձեւացնելով:

Այս անգամ քրքիջը պայթման մը պէս պայթեցաւ: Երեք սեղաններն ալ խնդալէ կը ճայթէին: Անոնք որ խօսակցութեան սիրոյը չէին լսած, իրենց քովնստողներուն կը ծռէին տեղեկութիւն առնելու համար և յետոյ միասին աւելի բարձրաձայն կը ծիծաղէին:

Միայն Տելեմաքին քով նստող օրիորդը չէր ծիծաղեր, մինչև իսկ կ'երեւէր թէ իւր վիճակին վրայ կը ցաւէր: Երիտասարդը նշմարեց զայս, բայց կարծեց թէ կոճապղպեղն էր որ անոր ստամոքսը կը նեղէր: Դժբաղդութիւնն անիրաւ կրնէ զմարդ:

Սակայն և այնպէս քաղաքավարութեամբ մեծ գաւաթ մը պաղ ջուր լցուց, զոր օրիորդը կը խնդրէր իրմէ, վասնզի ծանրագլուխ երեւելու մեծ պէտք մը կ'զգար: Օրիորդն այս առիթէն օգուտ քաղեց անոր ակռան ի վար բռնելու, «Մխիթարուեցէք Պ. Տբ.ի, բոլոր կանայք Սոֆի Միզբլի չեն նմանիր:

Տելեմաք վերականգնեցաւ, իբր թէ օձէ մը խայթած լինէր: Դեռատի օրիորդը ժպտելով անոր կը նայէր, և իւր առջեւի ակռայներն, որք շատ երկայն էին, ամբողջապէս կը տեսնուէին: Կամ բառերը, շարժուածները, հայեցուածքներն և ձայնին հնչումներն իմաստ մը չունին, կամ ամենէ քաղցր խոստովանութեանց նախաշաւիղն են: Տելեմաք պէտք էր որ օգուտ քաղէր իւր առաւելութիւններէն: Բայց արգարացնելու համար զայն պէտք է կրկնել թէ դժբաղդութիւնը կը զայրացնէր զինքն:

Շարունակելի

տել, ըսաւ, թէ ես որ տասը զաւակաց ապագայն պիտի ապահովեմ, իմ բոլոր դրամագլուխս հոն դրած եմ»։

Յետոյ պատմեց Բանամայի ջրանցքին պեղման համար սկսուած աշխատութիւններն և յոյս յայտնեց որ գործը երեք տարուան մէջ կ'ամբարտի։ Տասներիս հազար գործաւորը կ'աշխատին հոն։ «Հիւանդները կը ենամուին այն ջրանցքի մայրաքաղաքաց ձեռօք, որք տմարդութեամբ վանուեցան Ֆրանսայի հիւանդանոցներէն։»

—«Շատ կառավարութիւններ տեսած եմ, յարեց, և ամենուն հետ ալ աղէկ եղած եմ, բայց չեմ կրնար հասկնալ այն պատերազմը զոր արդի. հանրապետականք կը մղեն ընդդէմ կրօնի։»

Պ. Տը Լէսէպս իւր ճառը վերջացուց շնորհակալ լինելով Լիոնի բնակչաց երեսոն ազնիւ հիւրասիրութենէն՝ յայտարարելով թէ Լիոն քաղաքն արուեստից և գիտութեանց երկրորդ հայրենիք մը կը համարի։

Պէնէտօ և Թէոդէն անուն փոխադրաբանները Թուլոնէն ճամբայ ելած են նոր զօրք և ռազմամթերք տանելով ի Թոնքին։

Բանդոնէն կը ծանուցուի թէ Զիւնացիներն այժմ առաջուան չափ պատերազմական եռանդ չեն ցոյց տար։

Պ. Լամմն Ապսլ երեւելի գրագէտն և խմբագիրն յուն. 24ին անդամ ընտրեցաւ ֆրանսական Ակադեմիային։ Անոր դէմ մրցող գրագէտն էր Պ. Քոբբէ, որ 14 քուէ միայն ստացաւ ընդդէմ 18 քուէի, որ տրուեցաւ Պ. Լամմն Ապսլի։

ԳԵՐՄԱՆԻԱ

Հռոմի գերմանական դեսպան Պարոն տը Բէլօտէլ երկար հեռագիր մը ուղղելով Պիզմարք իշխանին, բացատրած է Վիքտոր Էմմանուէլի գերեզմանին վրայ վերջին օրերս կատարուած ազգային ընդհանուր ուխտագնացութեան կարեւորութիւնը։

Ի մէջ այլոց դեսպանը կ'ըսէ թէ այս ուխտագնացութիւն քաղաքական այնքան մեծ նշանակութիւն մը ունի, որ չափազանցութիւն չէ ըսել թէ այդ մէկ օրն յիսուն տարուց չափ նպաստած է իտալական միապետութեան հաստատման գործին։

Դատական իշխանութեանց հրամանաւ Պերլինի Ոստիկանութիւնը յունուար 24ին ժողովեց Վասիլի կոմսին հրատարակած Պերլինէ ընկերակցութիւն անուն գիրքին առաջին օրինակները նոյն օրն որ Պերլին ղրկուած էին։ Այս գիրքը անարգալից ակարկութիւններ կը պարունակէ կայսեր, կայսերական ընտանեաց անդամոց, Պիզմարք իշխանին եւ նախարարաց դէմ։

ՍՊԱՆԻԱ

Բարիզի Սպանիական դեսպան Մառէշալ Սէրանօ հրաժարական տուաւ իւր պաշտօնէն՝ նոր նախարարութեան կազմութեան վրայ։

Կը կարծուի թէ Սպանիոյ նոր կառավարութիւնը ի մօտոյ պիտի փոփոխէ իւր Բարիզի, Վիէննայի, Լոնտրայի, Հռոմի (Վատիկանն ալ միաւորեալ) Պրուքսէլի, Աթէնքի և Պուքրէշի դեսպանները։

Արտաքին գործոց Նախկին Նախարար Պ. Միկէլա Մանիւէլ Բարիզի սպանիական դեսպան անուանած է և Մարքի տը Մօյէն Վատիկանի մօտ սպանիական դեսպան։

Արդարութեան գործոց Նախկին Նախարար Պ. Քարտենա Սպանիոյ Պանքային կառավարիչ կարգուած է։ Յունուար 26ին, Սպանիոյ հասարակապետական երեսփոխան Պ. Գասթելառի տան մէջ դումարում մը տեղի ունենալով, որոշուեցաւ որ Պ. Գասթելառ և իւր բարեկամք մասնակցին ընտրողական վիճակներուն և կը ուխտեն։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Քանի մ'օրէ հետէ զրոյց մը կայ Հասարակութեան մէջ, թէ Ազգային վարչութեան Քաղաքական ժողովը որոշած է հրաժարիլ։ Մտուգած եմք մեք, թէ Քաղաքական ժողովը այսպիսի որոշում մը ըրած չէ, այլ միայն Նկատելով որ ազգային գործոց ուխտագնացութեան համար Ս. Պատրիարք Հօր նախագահութիւնը պէտք է, և կան ամենակարեւոր խնդիրներ՝ զոր կարգադրել կարելի չէ առանց Վարչութեան Դիւանին գործակցութեան ու ազդեցութեան, իւր չորեքշաբթի աւուր նստին մէջ այս վիճակն ուշադրութեան առեր, և յետ երկար խորհրդակցութեանց որոշեր է՝ այսօր Ազգային ժողովոյ ծանուցանել այս վիճակն, իւր ատենապետին՝ Սիմոն պէյի միջոցաւ։ և Ազգային ժողովոյ տնօրինութեան սպասել։

Արդարեւ Քաղաքական ժողովոյ մէջ հրաժարելու կարծիք յայտնուեր և պաշտպանուեր է, սակայն ժողովը ազգաւիրական գործ չէ համարեր, Յանկարծ բոլորովին լքանել ազգային գործերը, ներկայ ծանր վիճակին մէջ և պատշաճագոյն համարեր է Ազգ. ժողովոյ խնամատութեան դիմել։

Տրապիզոնէն երէկ հեռագիր մը հասնելով՝ Տրապիզոնի վիճակին Առաջնորդ Նաղարեանց Տ. Մատթէոս Սրբազանի վախճանը գուժեց։

Տփղիսի Նոր – Դարէն.

«Վերջապէս դեկտեմբերի 25ին Հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը կարողացաւ կայանալ։ Ներկայ էին մի միայն 34 անդամ։ Նախագահում էր ընդհանուր ժողովների համար նորէն որ նախագահ Պ. Սենեքերիմ Արծրունին։ Պարապմանց առարկան էր. — Խորհուրդի համար հինգ անդամի և հինգ փոխ–անդամի ընտրութիւնը։ Ժողովը շատ լաւ տրամադրութեան մէջն էր. պատրաստ էր մինչեւ անդամ ընտրելու նրանց, որոնք չէին կամենում ընտրուիլ, իսկ ցանկացողներին գրկաց ընդունում էր։ Ընտրուեցան խորհրդի անդամ՝ վերոյեն հներից Պ. Պ. Մանթաշեան և Մելիք–Աղաբեան. նոր անդամ — Պ. Պ. Եսայեան, Նաւասարդեան և Շահպարոնեան. փոխ–անդամ ընտրուեցան՝ Պ. Պ. Ափիոնցեանցեանցեանց, Ն. Աթաբէկեան, Կ. Բէհբուդեանց, Մելիք–Բէգլարեանց և Ա. Արասխանեանց։

«Ցոյս կայ, որ այսուհետեւ այդ բարենպաստակ և յոյժ կարեւոր ընկերութիւնն աւելի եռանդով գործէ և աւելի մեծ արդիւնք ցոյց տայ, խորհուրդի և ընդհանուր ժողովների նախագահութեան մէջ գոյութիւն ունեցող անտագոնիզմի անհետանալովը»։

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Այս գործին համար Պատրիարքարանէն եկած շրջաբերական թղթոց պատճէնք են հետեւեալք, որ ի հրատարակութիւն ղրկուած են առ մեզ։

Ամենապատիւ Տէր Մակար Սրբազան
Աքքեպիսկոպոս Մամիկոնեան արժանաընծիր Տեղապահ Կաթողիկոսութեան
Արարատեան Մայր Աթոռոյ Կաթողիկէ Սրբոյ Էջմիածնի։

Ամենապատիւ Սրբազան Եղբայր ի Քրիստոս.

Ընկալեալ զպատուական հեռագիր Ձեր որ ի քսան և հինգ ամենեան մտրսի հազար ութ հարիւր ութսուն և երեք ամի անցելոյ, որով ծանուցանէք մեզ պաշտօնապէս դիտառգումն աւուր ընտրութեան Կաթողիկոսի ամենայն Հայոց, բարեսէր մնայք ընդունել ցարդ Հրաւիրագիր Ձեր ի դէմ։

Նկատելով մեր ընդ ժողովոյս մերոյ՝ զի գայ մերձենայ օրն սահմանեալ, և լայնատարած է վիճակն հայկական՝ որ ընդ իրաւասութեամբ կայ Ազգային Պատրիարքարանի, որով և ժամանակի կարօտի ընտրականն գործոյութիւն. հարկ անհրաժեշտ համարեցաք առաջի առնել զընտրականն Խնդիր առ Ազգային ժողովն Տաճկաստանեայց Հայոց, ըստ օրինակի եղելոյ յառաջ քան զմեզ ի սոյն պիսի դէպս։

Ազգ՝ Ազգային ժողովն Հայոց ի Թ. ժ. ԺԱ. և ԺԲրդ գումարումս իւր անդ հազար ութ հարիւր ութսուն և երեք ամի չորքանի ի նկատումն առեալ զինքը Կաթողիկոսական ընտրութեան՝ յետ լուրջ և խոհական խորհրդածութեանց յօգուտ Ս. Եկեղեցոյ և Ազգի՝ վճռեաց զի ըստ ձեւ օրինակի հազար ութ հարիւր վաթսուն և վեց ամի մասնակցեսցի ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց։

Սոյն այս վճիռ Ազգային ժողովոյն որ հիմնեալ է ի վերոյ ազգային Սահմանադրութեան Տաճկաստանեայց Հայոց, որպէս յայտ է Ձերումդ Բարձր Սրբազնութեան և Սրբոյ Սինոդիդ, արդէն իսկ ընկալեալ է և ի հզոր Գերութենէ անտի Ասուստ տանց դիտաղութեան իրիք ի ժամանակի ընտրութեան արժանապատիւ Տ. Տ. Դէորգոյ չորրորդի ի Կաթողիկոսութիւն ամենայն Հայոց յամի Տեառն հազար ութ հարիւր վաթսուն և վեց։

Ազգ՝ ըստ այսմ վճռոյ Ազգային ժողովոյ ազգակից ինձ ունելով զնորան Ցանձնաժողով Կաթողիկոսական ընտրութեան՝ արդէն իսկ ձեռն ի գործ արկեալ է մեր ընտրական գործոց ըստ եղանակի հազար ութ հարիւր վաթսուն և վեց ամի ի վիճակս Տաճկաստանի։

Զոյն այս եղելութիւն վերոյգրեալ հաղորդել Ամենապատիւ Սրբազնութեան Ձերումդ և Սրբազնութեան Սինոդիդ

Մնամ եղբայրանուէր ողջունիւ սիրոյ ի Քրիստոս Յիսուս ի Յոյսն մեր ամենայնի աղօթակից եղբայր
(Մորուքբրոնիէն)
ՆԵՐՍԷՍ ԵՊՍԿ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ի 1 Յունուարի յամի 1884
ի Պատրիարքարանի Հայոց
Կոստանդնուպօլսոյ

Ամեն. Սրբազան եղբայր ի Քրիստոս

Մայր Աթոռն Արարատեան Սրբոյ Էջմիածնի՝ որպէս յայտ իսկ է Ամենապատուութեան Ձերումդ, վախճանմամբ Տեառն Գէորգայ չորրորդի Հոգելոյս Հայրապետին ամենայն Հայոց՝ այրիացեալ դաւալ ի գահակալ անտի իւրմէ՝ պատարկ կայ, և կատարելոյց է ընտրութիւն նորոյ Հայրապետի։

Ազգային Երեսփոխանական ընդհ. ժողովն՝ յայտմ նուագի եւս ի նկատումն առեալ զեղանակ ընտրութեան Կաթողիկոսի՝ յետ լուրջ խորհրդածութեանց և բազմակողմանի տեսութեանց վճռեաց զձեւ եղանակի հազար ութ հարիւր վաթսուն և վեց ամի՝ մասնակցիլ նորոյ ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց։ և վճռեաց միանգամայն զի ի պատրաստութիւն ցանկի փակելոյ Կաթողիկոսական ընտրելեաց՝ որպէս Մայրաքաղաքիս մերձաւոր վիճակաւորք եւ Պանահայրք, նոյնպէս և հեռաւոր վիճակաւորք, Առաջնորդական Տեղակալք, Վանահարք Վանուց, որոց դոյ միաբանութիւն, եւ այլք յեպիսկոպոսաց, որոց չիցէ պաշտօն, և դասանն արդ ի դաւառս կամ ի վանորայս, լիցին մասնակից պատրաստութեան նոյն ցանկի, ընտրեաց նաեւ կաթողիկոսական նոր Ցանձնաժողով մի, և նմա յանձն արար զհոգոլութիւն ընտրական գործառնութեանց և զգործադրութիւն նոցին։

Արդ՝ խորհրդակցութեամբ Կաթողիկոսական Ցանձնաժողովոյ՝ ընտրելոյ Ազգային Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ անտի՝ խնդրեմք, զի հաճեսցի Ամենապատիւ Սրբազնութիւն Ձեր՝ հրաւիրել զամենայն վիճակաւորս, զԱռաջնորդական Տեղակալս, զՎանահայրս վանուց, որոց իցէ միաբանութիւն, և զեպիսկոպոսունս՝ որոց չիք պաշտօն, և զդասանն արդ առ Ձեզ, զոսա զամենեսեան՝ որք ընդ իրաւասութեամբ Ձերով կան, ի մասնակցութիւն քուէարկութեան փակեալ ցանկի Կաթողիկոսական ընտրելեաց, զհետագայ իմն եղանակ։

Ա. Իւրաքանչիւր քուէարկու պարտաւորի զիւր քուէթուղթ ամփոփել յառանձին պահարանի իմիք, և կնքել կնքամամբ, և ի վերայ պահարանին կնքելոյ՝ նշանակել որոշակի զանուն իւր և եթէ եւ զտիտղոս իւրոյ պաշտաման։

Բ. Զնոյն քուէթուղթ ծարել յայլում պաշտօնագրի իմիք։

Գ. Զամենայն քուէթուղթս զայսօրինակ պատրաստեալս՝ հաճեսցի Ամենապատիւ Սրբազնութիւն Ձեր՝ իւրովն առանձին նամակաւ յղել ի Պատրիարքարան մինչ ցսկիզբն ամենեան մարտի տարւոյս։

Որպէս զի պատրաստք դասանիցին քուէթուղթքն յերկոտասաներորդում աւուր նոյն ամսոյ՝ յորում աւուր գումարելոյ է Եկեղեցական վիճակային ժողով՝ առ ի քուէարկել զփակեալ ցանկ Եպիսկոպոսացն ընտրելեաց, ուստի քուէթուղթքն՝ որոց չիցէ ժամանեալ մինչ ցօրն ցայն սահմանեալ ի քուէարկութիւն, անընդունելի դասեսցին։

Կարեւոր վարկանիմք յայտ առնել ասասնօր Ամենապատիւ Սրբազնութեան Ձերումդ ի դիտութիւն, զի ամենայն բարձրաստիճան պաշտօնեայք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ընտրելի են. և զի ի Կաթողիկոսական ընտրութեան անդ կատարելոյ ի հազար ութ հարիւր վաթսուն և վեց ամի՝ Եկեղեցական վիճակային ժողովն յանդիման արարեալ է Ազգային Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյն՝ զանուանս եօթն ընտրելի Եպիսկոպոսաց, ըստ այնմ ազատ է ապա և իւրաքանչիւր քուէարկու՝ նշանակել մինչեւ զանուանս եօթն Եպիսկոպոսաց ի քուէթուղթի անդ իւրում։

Իսկ Ամենապատիւ Սրբազնութիւն Ձեր, որ ի ժամանակի կաթողիկոսական ընտրութեան՝ կատարելոյ ի հազար ութ հարիւր վաթսուն և վեց ամի՝ ի կոչմանէ իւրմէ զեկեղեցական զոք փոխանորդ կացուցանել ի Մայրաքաղաքիս, զի ի դիմաց Ամենապատուութեան Ձերոյ մասնակցեսցի քուէարկութեանցն՝ որք կատարելոյ իցեն յատնի թէ՝ Եկեղեցական վիճակային ժողովոյ և թէ՝ Ազգ. Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ, որպէս և եղեալ իսկ է ի Հայրապետական ընտրութեան ամենայն Հայոց՝ որ ի հազար ութ հարիւր վաթսուն և վեց ամի։

Զեկուցանելով զայսոսիկ Ձերումդ Ամենապատիւ Սրբազնութեան՝ աներկիմտ եմք զի հաճեսցիք և փութասցիք ընդ գործ արկանել զսոյն այս որոշումս Ազգային Երեսփոխանական ընդհանուր ժողովոյն, հայցելով միանգամայն և ի Հոգւոյն Սրբոյ, զի ինքն առաջնորդեսցէ Եկեղեցական վիճակային եւ Ազգ. Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ յընտրութիւն արժանաւորագունին յեպիսկոպոսաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյս ի յաջորդութիւն մեծի Աթոռոյ Սրբազան Առաքելոցն Թադէի և Բարթուղիմեայ և Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի։

Մնամ
Ամենապատիւ Սրբազնութեան Ձերումդ
Աղօթակից եղբայր
(Մորուքբրոնիէն)
ՆԵՐՍԷՍ

ի 1 Յունուարի 1884
ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլսոյ

Ամենապատիւ Սրբազան եղբայր ի Քրիստոս

Մայր Աթոռն Արարատեան Սրբոյ Էջմիածնի՝ որպէս յայտ իսկ է Ձերումդ Ամենապատուութեան, վախճանմամբ Տեառն Գէորգայ չորրորդի Հոգելոյս Հայրապետին ամենայն Հայոց՝ այրիացեալ դաւալ ի Գահակալէ անտի իւրմէ՝ կատարելոյ է ընտրութիւն նորոյ Հայրապետի առ ամենայն Հայոց։

Ազգային Երեսփոխանական ընդհանուր ժողովն յայտմ նուագի եւս ի նկատումն առեալ զեղանակ ընտրութեան Կաթողիկոսի՝ յետ լուրջ խորհրդածութեանց և բազմակողմանի տեսութեանց վճռեաց զձեւ եղանակի հազար ութ հարիւր վաթսուն և վեց ամի՝ մասնակցիլ նորոյ ընտրութեան Հայրապետին ամենայն Հայոց։ և վճռեաց միանգամայն զի ի պատրաստութիւն ցանկի փակելոյ Կաթողիկոսական ընտրելեաց՝ որպէս Մայրաքաղաքիս մերձաւոր վիճակաւորք եւ Պանահայրք, նոյնպէս և հեռաւոր վիճակաւորք, Առաջնորդական Տեղակալք, Վանահարք Վանուց, որոց դոյ միաբանութիւն, եւ այլք յեպիսկոպոսաց, որոց չիցէ պաշտօն, և դասանն արդ ի դաւառս, մասնակից լիցին պատրաստութեան նոյն ցանկի, ընտրեաց նաեւ կաթողիկոսական նոր Ցանձնաժողով մի, և նմա յանձն արար զհոգոլութիւն ընտրական գործառնութեանց և զգործադրութիւն նոցին։

Արդ՝ խորհրդակցութեամբ Կաթողիկոսական Ցանձնաժողովոյ՝ ընտրելոյ Ազգային Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ անտի՝ խնդրեմք, զի հաճեսցի Ամենապատիւ Սրբազնութիւն Ձեր՝ հրաւիրել զամենայն վիճակաւորս, զԱռաջնորդական Տեղակալս, զՎանահայրս վանուց, որոց իցէ միաբանութիւն, և զեպիսկոպոսունս՝ որոց չիք պաշտօն, և զդասանն արդ առ Ձեզ, զոսա զամենեսեան՝ որք ընդ իրաւասութեամբ Ձերով կան, ի մասնակցութիւն քուէարկութեան փակեալ ցանկի Կաթողիկոսական ընտրելեաց, զհետագայ իմն եղանակ։

Ա. Իւրաքանչիւր քուէարկու պարտաւորի զիւր քուէթուղթ ամփոփել յառանձին պահարանի իմիք, և կնքել կնքամամբ, և ի վերայ պահարանին կնքելոյ՝ նշանակել որոշակի զանուն իւր և եթէ եւ զտիտղոս իւրոյ պաշտաման։

Բ. Զնոյն քուէթուղթ ծարել յայլում պաշտօնագրի իմիք։

Գ. Զամենայն քուէթուղթս զայսօրինակ պատրաստեալս՝ հաճեսցի Ամենապատիւ Սրբազնութիւն Ձեր՝ իւրովն առանձին նամակաւ յղել ի Պատրիարքարան մինչ ցսկիզբն ամենեան մարտի տարւոյս։

Որպէս զի պատրաստք դասանիցին քուէթուղթքն յերկոտասաներորդում աւուր նոյն ամսոյ՝ յորում աւուր գումարելոյ է Եկեղեցական վիճակային ժողով ի քուէարկել զփակեալ ցանկ Եպիսկոպոսացն ընտրելեաց, ուստի քուէթուղթքն՝ որոց չիցէ ժամանեալ մինչ ցօրն ցայն սահմանեալ ի քուէարկութիւն, անընդունելի դասեսցին։

Կարեւոր վարկանիմք յայտ առնել ասասնօր Ամենապատիւ Սրբազնութեան Ձերումդ ի դիտութիւն, զի ամենայն բարձրաստիճան պաշտօնեայք Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ ընտրելի են. և զի ի Կաթողիկոսական ընտրութեան անդ կատարելոյ ի հազար ութ հարիւր վաթսուն և վեց ամի՝ Եկեղեցական վիճակային ժողովն յանդիման արարեալ է Ազգային Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյն՝ զանուանս եօթն ընտրելի Եպիսկոպոսաց, ըստ այնմ ազատ է ապա և իւրաքանչիւր քուէարկու՝ նշանակել մինչեւ զանուանս եօթն Եպիսկոպոսաց ի քուէթուղթի անդ իւրում։

Իսկ Ամենապատիւ Սրբազնութիւն Ձեր, ըստ վճռոյ Ազգ. Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ դումարելոյ ի հազար ութ հարիւր վաթսուն և վեց ամի՝ հաճեսցի ի կոչմանէ իւրմէ եկեղեցական զոք փոխանորդ կացուցանել ի Մայրաքաղաքիս, զի ի դիմաց Ամենապատուութեան Ձերոյ մասնակցեսցի քուէարկութեանցն՝ որք կատարելոյ իցեն յատնի թէ՝ Եկեղեցական վիճակային ժողովոյ և թէ՝ Ազգ. Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ, որպէս և եղեալ իսկ է ի Հայրապետական ընտրութեան ամենայն Հայոց՝ որ ի հազար ութ հարիւր վաթսուն և վեց ամի։

Զեկուցանելով զայսոսիկ Ձերումդ Ամենապատիւ Սրբազնութեան՝ աներկիմտ եմք՝ զի հաճեսցիք եւ փութասցիք ընդ գործ արկանել զսոյն այս որոշումս Ազգ. Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյն, հայցելով միանգամայն և ի Հոգւոյն Սրբոյ, զի ինքն առաջնորդեսցէ Եկեղեցական վիճակային եւ Ազգ. Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ յընտրութիւն արժանաւորագունին յեպիսկոպոսաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյս ի յաջորդութիւն մեծի Աթոռոյ Սրբազան Առաքելոցն Թադէի և Բարթուղիմեայ, եւ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի։

Մնամ
Ամենապատիւ Եղբայրութեան Ձերումդ
Աղօթակից եղբայր
(Մորուքբրոնիէն)
ՆԵՐՍԷՍ

ի 1 Յունուարի յամի 1884
ի Պատրիարքարանի Հայոց
Կ. Պոլսոյ

Ամենապատիւ Սրբազան Եղբայր ի Քրիստոս

Մայր Աթոռն Արարատեան Սրբոյ Էջմիածնի՝ որպէս յայտ իսկ է Ձերումդ Ամենապատուութեան, վախճանմամբ Տեառն Գէորգայ Դ. հոգելոյս Հայրապետին ամենայն Հայոց՝ դատարկ է, և նոր ընտրութիւն պիտի կատարուի։

Ազգ. Երեսփոխական Ընդհանուր ժողովն այս անգամ եւս Կաթողիկոսական ընտրութեան եղանակն ի նկատի առնելով՝ յետ լուրջ խորհրդածութեանց և բազմակողմանի տեսութեանց որոշեց ըստ եղանակի 1866 ամի մասնակցիլ, Կաթողիկոսական ընտրութեան, հետեւապէս սոյն պաշտօնագրով ըստ հրաւիրեմք զԳերապատուութիւն Ձեր մայրաքաղաքիս իբրեւ մերձաւոր առաջնորդ Հայկական թեմին . . . . որ հաճիք գայ ի մայրաքաղաքս, և ներկայ գտնուիլ Եկեղեցական վիճակային ժողովոյ գումարման որ տեղի պիտի ունենայ ի 12 Մարտի տարւոյս, Կաթողիկոսական ընտրելեաց փակեալ ցանկը քուէարկելու համար։ Իսկ եթէ բանաւոր պատճառաւ չկարենայք գալ, պէտք է որ մասնակցիք դաւառը կերպով հետեւեալ եղանակաւ,

Ա. Ձեր քուէն կնքամամբ կնքեալ յատուկ պահարանի մը մէջ ամփոփէք և նոյն պահարանին վրայ Ձեր անունը միայն և Ձեր պաշտաման տիտղոսը նշանակէք որոշակի,

Բ. Նոյն քուէթուղթը Ձեր մի այլ պաշտօնական դրոյն մէջ պէտք է ներփակէք,

Գ. Նոյն քուէթուղթն պէտք է յղէք ի Պատրիարքարան մինչ տարւոյս Մարտ ամսոյ սկիզբը,

Որպէս զի պատրաստ գտնուի Ձեր քուէն ի 12րդ օրն նոյն ամսոյ, յորում աւուր պիտի գումարի Եկեղեցական Վիճակային ժողովն ընտրելի եպիսկոպոսաց փակեալ ցանկը քուէարկելու, հետեւարար այն քուէթուղթերք որք մինչ ցորոշեալ օրն պատրաստ չեն գտնուիր վճռուած են անընդունելի լինել։

Ընդ գրոյս յղելով առ Գերապատուութիւն Ձեր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եպիսկոպոսաց ընդհանուր ցուցակն՝ կարեւոր կը համարիմք յիշեցնել ասասնօր ի գիտութիւն թէ 1866 ամի Կաթողիկոսական ընտրութեան համար Եկեղեցական պիսկոպոսաց ի քուէթղթի անդ իւրում։

Իսկ Ամենապատիւ Սրբազնութիւն Ձեր ըստ վճռոյ Ազգային Երեսփոխանական Ընդհանուր ժողովոյ յընտրութիւն արժանաւորագունին յեպիսկոպոսաց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյս ի յաջորդութիւն մեծի Աթոռոյ Սրբազան Առաքելոցն Թադէի և Բարթուղիմեայ և Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի լուսաւորչի։

Մնամ
Ամեն. Եղբայրութեան Ձերումդ
Աղօթակից եղբայր

ի 1 Յունուարի յամի 1884
ի Պատրիարքարանի Հայոց
Կոստանդնուպօլսոյ

Ամենապատիւ
Տ. Խաչատուր Կաթողիկոս
Տաճն Աղթամարայ

Դերապատիւ Սրբազան Եղբայր ի Քրիստոս

Ինչպէս յայտնի է Ձերդ Դերապատուութեան, որ Արարատեան Մայր Աթոռն Սրբոյ Էջմիածնի վախճանմամբ Տէր Գէորգ Դ. հոգելոյս Հայրապետին ամենայն Հայոց՝ դատարկ է, և նոր ընտրութիւն պիտի կատարուի։

Ազգ. Երեսփոխական Ընդհանուր ժողովն այս անգամ եւս Կաթողիկոսական ընտրութեան եղանակն ի նկատի առնելով՝ յետ լուրջ խորհրդածութեանց և բազմակողմանի տեսութեանց որոշեց ըստ եղանակի 1866 ամի մասնակցիլ, Կաթողիկոսական ընտրութեան, հետեւապէս սոյն պաշտօնագրով ըստ հրաւիրեմք զԳերապատուութիւն Ձեր մայրաքաղաքիս իբրեւ մերձաւոր առաջնորդ Հայկական թեմին . . . . որ հաճիք գայ ի մայրաքաղաքս, և ներկայ գտնուիլ Եկեղեցական վիճակային ժողովոյ գումարման որ տեղի պիտի ունենայ ի 12 Մարտի տարւոյս, Կաթողիկոսական ընտրելեաց փակեալ ցանկը քուէարկելու համար։ Իսկ եթէ բանաւոր պատճառաւ չկարենայք գալ, պէտք է որ մասնակցիք դաւառը կերպով հետեւեալ եղանակաւ,

Ա. Ձեր քուէն կնքամամբ կնքեալ յատուկ պահարանի մը մէջ ամփոփէք և նոյն պահարանին վրայ Ձեր անունը միայն և Ձեր պաշտաման տիտղոսը նշանակէք որոշակի,

Բ. Նոյն քուէթուղթը Ձեր մի այլ պաշտօնական դրոյն մէջ պէտք է ներփակէք,

Գ. Նոյն քուէթուղթն պէտք է յղէք ի Պատրիարքարան մինչ տարւոյս Մարտ ամսոյ սկիզբը,

Որպէս զի պատրաստ գտնուի Ձեր քուէն ի 12րդ օրն նոյն ամսոյ, յորում աւուր պիտի գումարի Եկեղեցական Վիճակային ժողովն ընտրելի եպիսկոպոսաց փակեալ ցանկը քուէարկելու, հետեւարար այն քուէթուղթերք որք մինչ ցորոշեալ օրն պատրաստ չեն գտնուիր վճռուած են անընդունելի լինել։

Ընդ գրոյս յղելով առ Դերապատուութիւն Ձեր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ եպիսկոպոսաց ընդհանուր ցուցակն՝ կարեւոր կը համարիմք յիշեցնել ասասնօր ի գիտութիւն թէ 1866 ամի Կաթողիկոսական ընտրութեան համար Եկեղեցա-

ՈՎՔԵՂՈՂՈՒՄՈՒՆ ԶԳԻՄ

ԿՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՆ

ԴԿՎՔԵՆՏ ՏՅՈՆ ՀՈՅՈՆ ԴՈՒԼՈՎԳ ԴՈՒԿՈՒԴՈՒՏԿՎՅ

ՎԱՐՈՒՄԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԵՇՏՅԱ ԿԳԱ

ՈՎՔԵՂՈՂՈՒՄՈՒՆ ԶԳԻՄ ԿՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

Ի ՊՈՍՏ ԿԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

(ԴԱՐԳԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱ ԴԱՐԳԱՑՎԱԾ ՑՈՅԱՈՒՈՑՍԱԼԵ 'ԴԱՐԳՏՈՅՈՒՈՒ)

ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՎ ԽՄԲԱԳՐՎԱԾ ԶԱՏՈՒՄ

Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

Գնումը 21 թերթերի՝ 6/31 մարտ 1884 թվականի

ԱՌԱՋԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՈԴՎԱԾ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանով Հոգևոր Ժողովի Նախագահ՝ Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյան

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանով Հոգևոր Ժողովի Նախագահ՝ Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյան

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հրամանով Հոգևոր Ժողովի Նախագահ՝ Գարեգին Եպիսկոպոս Հովսեփյան

ԱՌԱՋԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՈԴՎԱԾ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍ ԸՆՏԱՆԵԿԱՆ
(Դէմակաոք և անդէմակ)
Ի ՆՊԱՍՏ
ԱՐԱՄԵԱՆ ԵՐԿՍԵՌ ՎԱՐԺԱՐԱՆԻ
Ի ԹԱՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԳՈՒՆԻ
ԳԱՂԻԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍ ՎԱՍՊ. Պ. ԿԱՋԷԻ
ՆԱԽԱԳԱՀ ԻՊԵԱՆ ՆԵՐՔԵՒ
ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ ՁԱՆԻՒՔ
Շաբաթ գիշեր, 28/9 Յունվար
1884 ժամը 2ին
Նախագահ.
Վահան. Մ. Կարէ
Ատենադպիր.
Մեծ. Միքայէլ Էֆ. Մամիկոնեան
Գանձապետ.
» Յովհաննէս Էֆ. Կիւրպէզեան
Ատենադպիր.
» Միհրան Էֆ. Շիրինեան:
ԱՆԴԱՄՔ
Վահան. Կարապետ Էֆ. Շահպազ
Մեծ. Մաթոս Էֆ. Ունճեան
» Եղիա Էֆ. Պէյլերեան
» Մկրտիչ Էֆ. Մուրատեան
» Կարապետ Էֆ. Դարամանճեան
» Անտոն Էֆ. Ադասեան
» Տիգրան Էֆ. Ս. Մանուկեան
» Եղէկիէլ Էֆ. Մօսթիճեան
» Միսաք Էֆ. Թաշճեան
» Միսաք Էֆ. Պետրոսեան
» Մելքոն Էֆ. Հալաճեան

ԸՆԹՍՑՔ Ի ԴՐՈՅ ԲԱՐԲԱՌ
Բ. Տարի
ՀԱՒԱՔՈՒԱԾՈՅՔ
Ի ՆԱԽՆԵԱՅ ԵՒ ՅԱՐԴԵԱՅ
Հանդերձ Քրիստոնեական Բացատրութիւնքով
Երկասիրեաց
ԵՂԻՇԷ Վ. ԴՈՐԵԱՆ
Սոյն գասագիրքն գրաբարի ուսման համար ցարդ հրատարակուած լաւագոյն դասագիրքերէն մին լինելով կընծայէ ուսանողաց ամէն գիւրութիւն: Այն հատուածներն՝ որ ամփոփուած են ի նմա՝ թէ արձակ և թէ ոտանաւոր, նոր են և նոր ըստ մեծի մասին:
Յիշեալ գասագիրքն բաժնուած է երկու մասերու: Ա. մասին մէջ «Նախնեաց» գանազան կտորներէ զատ կայ նաև Եղիշէի հանճաւորութիւնն վեց հատուածներու բաժնուած. իսկ Բ. մասին մէջ «Աքսորականք ի Մախերիա և Պօղ և Վիրգինիա» վիպասանութեանց հանճաւորութիւնն ամփոփուած է հայերէն դեղեցիկ թարգմանութեամբ:
Կեդրոնատեղին է Արամեան գրատուն: Կը ծախսուի նաև գրավաճառաց քով ի գին 10 գրուշ:

ՎԱՅՐԿԵՆԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա Յ Ց Ե Տ Ս Ո Մ Ս Ե Ր Ո Ւ
Կը պատրաստուին ազնիւ քարտերու վրայ զանազան գրերով, ի գին 100 հատը 10 դահեկան:
Փափաքողք դիմելու են Արամեան տպարան, Զագմագ Յակոբեան խան:

ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՅ
Ա. ԳԱՐԱՑ ՄԱՂԱՔ ԵՒ ԸՆԿ.
Կալատա, Եկեղեցի Գալատասարայ. 101.
(Գէորգ պէյ խանի դէմ.)
Սոյն վաճառատան մէջ կը գտնուի «Նասրի» գեղ մը որ մի երեւելի Ռուս բժիշկ հնարած է և մեծ ընդունելութիւն գտած է, բովանդակ Ռուսիոյ մէջ. այս գեղը 13 օրուան մէջ. առանց ցաւ պատճառելու Նասրը տեղէն կը հանէ:
Նոյնպէս կը գտնուի Ռուսահայ գրագիտաց, խմբագրաց, կրօնականաց և այլ նշանաւոր ազգայնոց լուսանկարներ:
Նաև թղթեղէն գրչեղէն, դպրոցական և նկարչութեան պիտոյք:

Ե. Տ. ՄԻՔԱՅԵԱՆ
ԳՐԱՆՑ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՆՑ ՇԱՐԺՈՒՄ
Բ. Տարի, Յունուար
Թէեւ Հանդէսիս խմբագիրը Տանուցած էր թէ ներկայ տարւոյս մէջ աւելի ընդարձակ պիտի հրատարակէր զայն, սակայն Եւրոպոյէ Տնօրէնութիւնն ալ իրեն յանձնուելուն պատճառաւ՝ նոյն դիրքով ու նոյն պայմաններով պիտի շարունակէ հրատարակել Շաբաթօրն:
Ա.յդ բաժանորդագրութեան պայմանք են՝
Մայրաքաղաքիս համար 20 դհ.
Գաւառաց և օտար երկրաց համար 26 »
Գին տեսարին 2 »
Շաբաթօրին հասցէն է՝ Արամեան տպարան՝ Յակոբեան խան՝ Զագմագճրլար, և Հավուզլու խան՝ միջին յարկ՝ թիւ 4, Կ. Պոլիս:

ՏՊԱՍՏԵՆ ԶՈՒԼՈՒՄԱՆ
Օտուն-Գաբու, թիւ 465.
Հայերէն, Տաճկերէն, Յունարէն և Լատինական ամէն տեսակ Տպագրական տառեր և զարդեր կը գտնուին պատրաստ, յոյժ չափաւոր գրի ներքով:
Գաւառներէ և օտար երկիրներէ ևս յանձնարարութիւնք ամենայն ճշդութեամբ կը կատարուին, երբ հետեւեալ հասցէիս ուղղուին մեզ
S. DAMADIAN,
Odoun-Capou, n° 465.
CONSTANTINOPLE.

ԳՍԱՎԻՑԷ ՏԸ ՄՕՆԹԼԻԷՆ
ԷՍԻՐԱԸ ՀԻՆՏ
ՍԻՍԹԷՐՃԻՅԻ Յ. ԹՕԼԱՅԵԱՆ
(Երկու հատոր)
Կը գտնուի բոլոր հայ գրավաճառաց քով, Պօլիս, Ջրավաճառ Պօղոս Աղայի խանութը և Բերայի գլխաւոր հայ գրավաճառաց քով.
Գին իւրաքանչիւր հատորի, 15 գրշ:

Ա Զ Դ

Թ. ՊԱԼԵԱՆ ԵՒ Ն. ՍԱՖՐԱՃԵԱՆ

Պատիւ ունին ծանուցանել արգոյ հասարակութեան սր Ֆէրի-գիւղի Պալեան դործարանէն եղած Պաքսիմանթներու (պէսքէտ) ընդհանուր մեծ-բանոց մը հաստատած են Կ. Պոլիս Եէնի-ճամի, Օսմ. Թղթատարութեան դէմ, թիւ 1 խանութը, ուր կը վաճառուին խիստ ընտիր տեսակէն և աժան գնով, մեծ ու փոքր քանակութեամբ:

Նաև ամէն տեսակ ըմպելիք և շաքարեղէնք և փոքր տղայոց համար ամէն տեսակ մենդարար ուտելիք կը գտնուին յիշեալ Մթերանոցին մէջ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

Ղ. Փ.
Մայրենի լեզու (Ն. Տ. Ղեւոնդեան)
Ա. Տարի Վեցերորդ տպագր. (40 պատկերով) 3
Մայրենի լեզու (Ն. Տ. Ղեւոնդեան)
Բ. Տարի Երրորդ տպագր. (30 պատկերով) 3
Մայրենի լեզու (Ն. Տ. Ղեւոնդեան)
Գ. Տարի Երկրորդ տպագր. (78 պատկերով) 5
Մայրենի լեզու (Ն. Տ. Ղեւոնդեան)
Դ. Տարի պատկերազարդ . . . 5
Քերականութիւն աշխարհաբար լեզուի (Թ. Թերզեան) 6
Գեղագր. Տեարեր (Յ. Վասիլեան) 4 տետրերու մէջ ամփոփեալ . . .
Գին մէկ տետրի 30
Գին հարիւր տետրերու 60
Դպրոցական Տետր. Գին հարիւր տետրի 25
Բաւական թուով գնողաց գոհացուցիչ զեղջ կըլլուի:
Մանր ուսումնք Քրիստոնէական հաւատաց (հեղինակութիւն Գրիգոր Էփէնտի Մարկոսեան) 60
Կը գտնուին ամէն գրավաճառաց քով կեդրոնատեղին է Հայոց Միացեալ Ընկերութեանց գրասենեակը:
Այն դասագիրքը որ հեղինակին կողմանէ ընկերութեան նուիրեալ է, քսաներեքերորդ անգամ տպագրեալ է պատկերազարդ:
ՂԱԼԱԹԻԱ, ԿԷՕՋԷ ՕՂԼՈՒ ԽԱՆ, ԹԻՒ 15.

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ
Արեւելքի խմբագրութիւնը հրաւէր կը կարդայ բոլոր ազգային հեղինակաց և թարգմանչաց որ իրենց հրատարակած գրքերէն երկերկու օրինակ գրկեն խմբագրութեան, եթէ կը փափագին հրատարակութեանց ազդերը և միանգամայն անոնց նկատմամբ քննական յօդուածներ տեսնել լրագրոյս մէջ:

ՀԱՄԱՌՕՏ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ
Գրեց
Ռ. Յ. Պերպերեան
Գին 7 1/2 գրուշ
Կը ծախսուի Հայ գրավաճառաց և հեղինակին քով:

Արտօնատէր, Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԱՐԵՒ
Գալաթիա, Քիւրէջճիէր փողոց, Թիւ 41:

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷ

ԱՌՕՐԵԱՅ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ՎՈՍԲՈՐԻ ՇՈՒՊԵՆԱՒԱՅ

1884 ՅՈՒՆՈՒԱՐ ԱՄՍՈՅ

ՎՈՍԲՈՐԻՆ ԻՋՆՈՂ ՇՈՒՊԵՆԱՒՆԵՐ

ԹԻՒԸ ՇՈՒՊԵՆԱՒՈՒՑ

ՆԱՒԱՄԱՏՈՅՑԸ	21 Ժ.	33 Վ.	17 Ժ.	23 Վ.	4 Ժ.	28 Վ.	19 Ժ.	22 Վ.	20 Ժ.	17 Վ.	1 Ժ.	21 Վ.	18 Ժ.	28 բ Վ.	19 Ժ.	33 Վ.	ա Ժ.	4 Վ.	22 Ժ.	23 Վ.	19 Ժ.	20 Վ.	28 Ժ.	4 Վ.
Ա. Քավաք	—	—	—	—	—	—	—	—	3	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	8 15	—	—
Բ. Քավաք	—	—	—	—	—	—	—	—	3 8	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	8 23	—	—
Եէնի մահալլէ	—	—	2	—	—	—	—	—	3 18	—	—	—	—	—	—	4 30	—	6 45	—	—	—	8 33	—	—
Մէզար պուրնու	—	—	2 4	—	—	—	—	—	3 22	—	—	—	—	—	—	4 34	—	6 49	—	—	—	8 37	10	—
Պէյճիք տէրէ	—	—	2 8	—	—	—	—	—	3 26	—	—	—	3 45	—	—	4 38	—	6 53	8 45	—	—	8 41	10 04	—
Փիրէճ պուրնու	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Թարապիա	—	—	2 19	—	—	—	—	—	3 37	—	—	—	3 56	—	—	4 49	—	7 04	8 56	—	—	8 52	10 15	—
Պէյօղ	—	—	—	2 15	—	—	—	—	—	—	—	—	4 5	—	—	—	5 45	7 13	9 5	—	—	9 1	—	—
Բաշա պահչէ	—	—	—	2 22	—	—	—	—	—	—	—	—	4 13	—	—	—	5 52	7 20	9 12	—	—	—	—	—
Եէնի քէօյ	—	—	2 30	—	—	—	2 35	—	3 48	—	—	3 50	—	—	—	5	—	7 30	—	—	—	9 13	10 26	—
Ր. բդ. մահալլէ	—	—	—	2 30	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	6 —	—	ա	—	—	—	—	—
Սթէնիա	—	—	—	—	—	—	2 42	—	—	—	—	3 57	—	—	—	5 7	—	—	—	—	—	ա	—	—
Իմիրիէն	—	—	—	—	—	—	2 47	—	—	—	—	4 4	—	—	—	5 14	—	7 39	—	—	—	9 22	10 35	—
Պոյանճը քէօյ	—	—	—	—	—	—	2 50	—	—	—	—	4 7	—	—	—	5 17	—	—	—	—	—	9 2-	—	—
Գանլըճա	—	—	—	2 38	—	—	—	—	—	—	—	—	4 27	—	—	—	6 8	7 48	9 26	—	—	—	—	—
Ր. Հիսար	—	—	—	—	—	—	2 58	—	—	—	—	4 15	—	—	—	5 25	—	7 57	—	—	10 30	9 33	10 45	—
Ա. Հիսար	—	—	—	2 44	—	—	—	—	—	—	—	—	4 33	—	—	—	6 14	8 06	9 32	—	—	—	—	—
Գանտիլլի	—	—	—	2 50	—	2 50	—	—	—	3 45	—	—	4 40	—	4 45	—	6 20	8 12	9 39	10 50	—	—	—	—
Վանի քէօյ	1 45	—	—	—	—	2 56	—	—	—	3 51	—	—	ա	—	5 1	—	6 26	—	9 45	—	—	—	—	—
Պէպէք	—	2	—	—	—	—	3 06	3 10	—	—	—	4 23	—	4 30	—	5 33	—	—	—	—	—	9 41	—	11 10
Արնաւուտ քէօյ	—	2 7	—	—	2 40	—	—	3 17	—	—	3 50	—	—	4 37	—	5 40	—	8 22	—	—	—	9 48	10 58	—
Զէնկիլ քէօյ	1 52	—	—	—	—	3 3	—	—	—	3 58	—	—	ա	—	5 8	—	6 33	8 30	9 52	—	—	—	—	—
Բուրու չէշմէ	—	2 14	—	—	2 48	—	—	3 24	—	—	3 53	—	—	4 44	—	5 47	—	—	—	—	—	9 55	—	—
Պ ալեր պ լի	1 59	—	—	—	—	3 09	—	—	—	4 04	—	—	ա	—	5 14	—	6 40	8 36	9 58	—	—	—	—	—
Օրթա քէօյ	—	2 22	—		2 57	—	—	3 32	—	—	4 7	—	—	4 52	—	5 55	—	8 45	—	—	—	10 3	11 10	—
Բուզկուճաք	2 5	—	—	—	—	3 16	—	—	—	4 11	—	—	ա	—	5 21	—	6 47	8 54	10 5	—	—	—	—	—
Պէշիկթաշ	—	2 30	—	—	3 06	—	—	3 40	—	4 21	4 16	—	—	5	5 31	6 13	—	9 04	—	—	—	10 11	11 18	—
Իսկիւտար	—	—	—	—	—	—		—	—	—	—	—	ա	—		—	6 55	9 14	10 13	—	—	—	—	—
Քապաթաշ	2 17	—	—	—	—	—	—	3 49	—	—	—	—	—	5 9	—	—	—	—	—	—	—	—	—	—
ԿԱՄՈՒՐՋ	2 25	2 45	3 05	3 35	3 25	3 52	3 35	3 57	4 23	4 56	4 31	4 53	5 15	5 17	5 46	6 18	7 10	9 29	10 28	11 —	11 20	11 26	11 33	11 40

——— Այսպէս նշանով ժամերը կը նշանակեն հաղորդակցութիւն երկու շոգենաւուց: ա. Ուրբաթ օրերը միայն: բ. Բացի ուրբաթ օրերէ:
ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. Ի բաց առեալ շոգենաւուց մեկնելու ժամերէն, միացորդ ժամերը փոփոխութեան ենթակայ են դէշ օդի կամ այլ պատճառաւ:

ԿԱՄՈՒՐՋԷՆ ՄԵԿՆՈՂ ՇՈՒՊԵՆԱՒՆԵՐ

ԹԻՒԸ ՇՈՒՊԵՆԱՒՈՒՑ

ՆԱՒԱՄԱՏՈՅՑԸ	21 Ժ.	33 Վ.	17 Ժ.	1 Վ.	4 Ժ.	28 Վ.	19 բ Ժ.	ա Վ.	20 Ժ.	22 Վ.	28 Ժ.	23 Վ.	19 Ժ.	18 Վ.	17 Ժ.	4 Վ.	33 Ժ.	22 Վ.	23 Ժ.	20 Վ.	19 Ժ.	21 Վ.	28 Ժ.	4 Վ.
ԿԱՄՈՒՐՋ էն մեկն.	2 35	3	3 15	3 20	3 45	4	4 15	4 15	5 30	6 45	8 30	9 30	9 50	10 15	10 30	10 30	10 40	11 5	11 10	11 10	11 30	11 40	11 45	12 —
Քապաթաշ	—	—	—	—	3 55	—	—	—	5 40	—	—	9 40	—	—	—	—	—	11 15	—	—	—	11 50	—	—
Իսկիւտար	2 50	—	—	—	3 59	—	—	4 30	—	7 —	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Պէշիկթաշ	—	3 15	—	—	4 09	—	—	—	5 49	7 10	8 44	9 49	10 5	—	—	10 45	10 55	11 24	—	—	—	—	12 —	12 15
Բուզկուճաք	2 56	—	—	—	4 19	—	—	4 36	—	7 20	—	9 59	—	—	—	—	11 5	—	—	—	—	12 2	—	—
Օրթա քէօյ	—	3 23	—	—	4 18	—	—	—	5 57	7 29	8 52	—	10 13	—	—	10 53	—	11 32	—	—	—	—	12 8	12 23
Պ ալեր պ լի	3 3	—	—	—	4 27	—	—	4 43	—	7 38	—	10 6	—	—	—	—	11 12	—	—	—	—	12 9	—	—
Բուրու չէշմէ	—	—	—	—	—	—	—	—	6 5	—	—	—	10 22	—	—	11 1	—	11 40	—	—	—	—	12 16	12 31
Զէնկիլ քէօյ	3 9	—	—	—	4 33	—		4 49	—	7 44	—	10 12	—	—	—	—	11 18	—	—	—	—	12 15	—	—
Արնաւուտ քէօյ	—	3 34	—	3 45	4 41	—	—	—	6 12	7 52	9 —	—	10 29	—	—	11 9	—	11 47	—	—	—	—	12 23	12 38
Պէպէք	—	—	—	—	—	4 30	—	—	6 19	—	9 7	—	10 37	—	—	11 16	—	11 54	—	—	12 —	—	12 30	—
Վանի քէօյ	3 16	—	—	—	—	—	—	4 56	—	—	—	10 19	—	—	—	—	11 25	—	—	—	—	12 22	—	—
Գանտիլլի	—	—	3 45	—	4 51	—	4 45	5 2	—	8 2	—	10 26	—	10 45	—	—	11 31	—	11 40	—	—	—	—	—
Ա. Հիսար	3 26	—	—	—	4 57	—	—	5 8	—	—	—	—	—	10 51	—	—	—	—	11 46	—	—	—	—	—
Ր. Հիսար	—	3 49	—	—	5 06	—	—	—	6 27	8 12	9 15	—	10 45	—	11 2	—	—	—	—	—	12 13	—	—	—
Գանլըճա	3 33	—	—	—	5 15	—	—	5 15	—	8 20	—	—	—	10 58	—	—	—	—	11 53	—	—	—	—	—
Պոյանճը քէօյ	—	—	—	—	—	—	—	—	6 35	—	—	—	—	—	11 10	—	—	—	—	—	12 21	—	—	—
Իմիրիէն	—	3 54	—	—	5 24	—	—	—	6 38	8 28	9 24	—	—	—	11 13	—	—	—	—	—	12 24	—	—	—
Սթէնիա	—	—	—	—	—	—	—	—	6 43	—	—	—	—	—	11 18	—	—	—	—	—	12 29	—	—	—
Ր. դղ. մահալլէ	—	—	—	—	—	—	—	5 23	—	—	—	—	—	—	—	—	—	—	12 2	—	—	—	—	—
Եէնի քէօյ	3 45	4 03	—	—	5 33	—	—	—	6 50	8 36	9 33	—	—	—	11 25	—	—	—	—	11 48	12 36	—	—	—
Բաշա պահչէ	—	—	—	—	5 43	—	—	5 32	—	—	—	—	—	11 10	—	—	—	—	12 11	—	—	—	—	—
Պէյօղ	—	—	—	—	5 50	—	—	5 41	7 2	—	—	—	—	11 17	—	—	—	—	12 18	—	—	—	—	—
Թարապիա	—	4 13	—	—	5 59	—	—	—	7 11	8 40	9 43	—	—	11 26	11 35	—	—	—	—	11 58	—	—	—	—
Փիրէճ պուրնու	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Պէշիկթաշ տէրէ	—	4 24	—	—	6 10	—	—	—	7 21	8 45	10 —	—	—	—	11 45	—	—	—	—	12 8	—	—	—	—
Մէզար պուրնու	—	—	—	—	6 14	—	—	—	7 25	—	9 55	—	—	11 38	11 49	—	—	—	—	12 12	—	—	—	—
Եէնի մահալլէ	—	4 29	—	—	6 18	—	—	—	7 29	—	—	—	—	—	11 52	—	—	—	—	12 16	—	—	—	—
Ր. Քավաք	—	—	—	—	—	—	—	—	7 39	—	—	—	—	11 50	—	—	—	—	—	—	—	—	—	—
Ա. Քավաք	—	—	—	—	—	—	—	—	7 47	—	—	—	—	12 —	—	—	—	—	—	—	—	—	—	—

ԻՍԿԻԻՏԱՐԻ ԳԻԾ

ԻՍԿԻԻՏԱՐ—ԿԱՄՈՒՐՋ

	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.
Իսկիւտարէն	2	—	2	30	3	—	3	30	4	—	4	30	5	10	5	45	6	20	7	—	8	10	9	—	9	45	10	20	10	30	10	45	11	05	11	25	11	45	12	05				
Պէշիկթաշ	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	5	55	—	—	7	10	8	20	—	—	—	—	10	25	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—				
Կամուրջ	2	15	2	45	3	15	3	45	4	15	4	45	5	25	6	10	6	35	7	25	8	35	9	15	10	—	10	45	10	45	11	—	11	20	11	40	12	—	12	20				

ԿԱՄՈՒՐՋ—ԻՍԿԻԻՏԱՐ

	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.
Կամուրջէն	2	15	2	45	3	15	3	45	4	15	4	45	5	25	6	—	7	—	8	15	9	—	9	30	10	—	10	25	10	45	11	05	11	25	11	50	12	05	12	05				
Պէշիկթաշ	—	—	—	—	—	—	—	—	—	—	5	—	—	—	6	15	—	—	—	—	9	15	—	—	10	15	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—				
Իսկիւտար	2	30	3	—	3	30	4	—	4	30	5	10	5	40	6	25	7	15	8	30	9	25	9	45	10	25	10	40	11	—	11	20	11	40	12	05	12	20	12	20				

ՀԱՐԷՄ ԻՍԿԷԼԷՍԻ ԳԻԾ

ՀԱՐԷՄ ԻՍԿԷԼԷՍԻ—ԿԱՄՈՒՐՋ

	[2] Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.
Կամուրջէն	4	—	4	4	11	—		
Սալաճաք	4	12	4	57	11	12		
Հարէմ իսկ	4	15	5	—	11	15		

ԿԱՄՈՒՐՋ—ՀԱՐԷՄ ԻՍԿԷԼԷՍԻ

	[1] Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.
Հարէմ իսկ	4	15	5	—	11	15		
Սալաճաք	4	22	5	07	11	22		
Կամուրջ	4	35	5	20	11	35		

ԿԱՌԱՒԱՌՋ ՇՈՒՊԵՆԱՒ

ԻՍԿԻԻՏ. ՍԻՐՔԷՃ. ԻՍԿ.

	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.
Իսկիւտարէն	4	15	5	15	10	15	11	30
Գալաթաշ	4	30	—	—	—	—	11	45
Սիրքէճի իսկ	4	45	5	35	10	35	—	—

ՍԻՐՔԷՃ. ԻՍԿ. ԻՍԿԻԻՏ.

	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.	Ժ.	Վ.
Սիրքէճի իսկ	4	45	5	45	11	—	—	—
Գալաթաշ	—	—	6	—	—	—	11	45
Իսկիւտար	5	05	6	15	11	20	12	—

[1] Բաց ի Հրէից տօն օրերէ. [2] Կիրակի օրն չկայ. [3] Քապաթաշով. [4] Գուզդունճաք.